

ՀԱՍՄՆԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍԿԵՎՈՒԱՅԻ ՎԱՆՔԸ 12-14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՄԵԶ ՀԱՍԱԾ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մշակույթի և գիտական մտքի պատմության մեջ իր նշանակալի տեղն ունի Կիլիկյան Սկևռա վանքը, որը կառուցել է լամբրոնյան իշխան Օշին Բ-ն 12-րդ դարի 40-ական թվականներին¹: Քիչ են տեղեկությունները վանքի շինության, ճարտարապետական ոճի, բարեգարդման մասին: Աղքատիկ են նաև հիշատակարանների, ժամանակակիցների հաղորդումները: Վանքի անունը առաջին անգամ հանդիպում ենք Գրիգոր Մլիճեցու 1173-ին Սկևռայում Ն. Լամբրոնացու պատվերով օրինակած Ավետարանի հիշատակարանում. «յիւր սեպհական անապատն Սկևռայ անուն կոչեցեալ»²: Աղբյուրները վկայում են, որ վանքը գտնվել է Կիլիկիայի նշանավոր, «անմատույց», ժամանակին նաև ռազմական նշանակություն ունեցող հայաբնակ Լամբրոն բերդի արևելյան կողմում, որից անջատված է եղել միայն ձորով³: Սկևռայի վանքը, ինչպես վկայում են հիշատակարանները, եղել է բերդի աղոթավայրը և Լամբրոնի իշխանների դամբարանը. «համգստարան մախնեաց իւրեանց» կամ «է տապանատուն ազգատոհմի իւրեանց»⁴: Բանասիրության մեջ կան այն ենթադրությունները, ըստ որի վանքը գոյություն է ունեցել մախբան Օշին Ա-ի Լամբրոնին տիրելը, և որ այն եղել է հունական ոճի կառույց: Օշին իշխանը վանքում հաստատվելուց հետո այն վերաշինել է, որի հետևանքով վանքը կորցրել է իր ոճը, այսինքն՝ հայկականացվել⁵:

¹ Վանքի կառուցման առավել ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Տեր-Ղազարյան, Հայկական Կիլիկիա, 1946 թ., Ամթիլիա, էջ 47:

² Գ. Մովսեսյան, Թորոս Աղբար Բ, էջ 442-444: Հավանաբար 1154 թ. Սկևռայում գրված Մաշտոցյան Մատանադարանի (ՄՄ) № 832 ձեռագրի գրիչն է Գեորգ Սկևռացին, որը 1192-ին օրինակել է Վարդ հարանց: Ն. Վ. Մովսեյան, «Սիրո», 1949 թ., Հայկական վանքեր, էջ 183-186:

³ Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, 1961 թ., էջ 111: Տեր-Ղազարյան, նշվ. աշխ., էջ 18: ՄՄ 1526 ձեռն.

⁴ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885 թ., էջ 97:

⁵ Գ. Զարբհանյան, Պատմություն հայ դպրության, 1897 թ., Վենետիկ, էջ 706: Հ. Ռսկյան, Կիլիկիայի վանքերը, 1957 թ., Վիեննա, էջ 9: Տեր-Ղազարյան, նշվ. աշխ., էջ 81: Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 71:

Սկևռայի վանքի գրական մշակութային կյանքը ունեցել է ծաղկման երկու շրջան. առաջինն ընդգրկում է 12-րդ դարի վերջից մինչև 13-րդ դարի սկիզբը և կապվում է վանքի առաջնորդ, մատենագիր, քաղաքական և պետական գործիչ Ներսես Լամբրոնացու գործունեության հետ, իսկ երկրորդ շրջանը՝ 13-րդ դարի կեսերը, և կապվում Գևորգ Սկևռայի ռաբունապետի գիտական, գրական գործունեության հետ:

Վանքը ժամանակին ճանաչվել է իր հարուստ մատենադարանով, որը հիմնադրել է Ն. Լամբրոնացին: Մատենադարանի հին գրչագրերը համարվել են ժամանակին «լավ» և «ընտիր» օրինակներ, և գրիչներից շատերը հատուկ եկել են Սկևռա՝ փափագելով ձեռագրեր ընդօրինակել «ի լաւ եւ ընտիր աւրինակէ... որ է ընտրեալ եւ հաճեալ բանի եւ բառի ի հոշակաւոր անապատէն, որ է Սկևռայ կոչեն»⁶:

Ն. Լամբրոնացին վանքում հիմնադրել է մեծ կանոնավոր դպրոց: Սկևռայի վանքում կրթվել և աշխատել են հայտնի մատենագիրներ Գրիգոր Սկևռացին, Մխիթար Սկևռացին, Գեորգ Լամբրոնացին և ուրիշներ, տաղանդավոր մկարիչներ Գրիգոր Միհեցին, Վարդանը, Կոստանդինը, Հովասափ Մաղկողը և ուրիշներ, երաժիշտներ Ստեփանոս և Գրիգոր քահանաները, Գրիգոր Չորունը, բազմաթիվ հմուտ գրիչներ՝ Սամվելը, Խաչատուրը, Ստեփանոս քահանան, Ստեփանոս Գույմերիցանցը և ուրիշներ, որոնց ձեռագրական ժառանգության մեջ, բացի սովորական պատվերներից, համդիպում ենք մեծ արքունական պատվերների: Պատվիրատուներից շատերը փափագել են, որ ձեռագրերը ընդօրինակվեն հատկապես Սկևռայի գրիչների ձեռքով. «զի ի ձեռն գրչացն, որ անդ կատարեսցեն զփափագն իրեանց գրութեամբ»⁷:

Դպրոցում գիտական, մշակութային կյանքի աշխուժացմանը նպաստել են մեծ Ն. Լամբրոնացուն հաջորդող մենաստանի առաջնորդները՝ Վարդան եպիսկոպոսը (1199), Գրիգոր Սկևռացին (1205), Մխիթար վարդապետ Սկևռացին (1254-74), Միմաս առաջնորդը (1285), տեր Սիմեոնը (1270-ական թթ.), Կոստանդին Պեհեսնացի եպիսկոպոսը (1314) և ուրիշներ, վանքի ուսուցչապետերը, որոնցից հիշատակվում են ժամանակի «երջանիկ» Գրիգոր և Բասիլ քահանաները, Հովհաննես և Բարդուղիմեոս վարդապետները⁸:

Նշանակալի է Սկևռայի դպրոցի դերը հատկապես կիլիկյան հայկական մանրանկարչության պատմության մեջ, որը 12-րդ դարի 2-րդ կեսից համարվել է կիլիկյան մանրանկարչության հիմնական, «առաջատար» կենտրոնը և որտեղ «ընդ դըպրութեան եւ յարունեստ գրչութեան եւ մկարագարդութեան յանմով մարգէին ի վա-

⁶ Բիւզանդիոն, 1902 թ., թ. 1725:

⁷ ՄՄ 5784 ձեռ., էջ 355ա:

⁸ ՄՄ 10509 ձեռ., էջ 426ա, ք:

նորայք»⁹: Սկևռայում ստեղծված բարձրարվեստ ձեռագիր հուշարձաններում է, որ մշակվում և ձևավորվում են կիլիկյան մանրանկարչության ինքնուրույն ոճի հիմնական առանձնահատկությունները: Սկևռայի գրքարվեստը բնութագրող հուշարձանները ընդգծվում են նրբությամբ, ճշգրտությամբ, նկարիչների կատարողական վարպետությամբ, գույների հմուտ ընտրությամբ և տրամադրությամբ, պատկերների կենդանությամբ¹⁰:

Մանրանկարչական արվեստը ավանդելու նպատակով Սկևռա են հրավիրվել կիլիկյան վանքերից հանրածանոթ նկարիչներ, գրիչներ: Գրչատաճն են աշխատել Հոտմկլայի դպրոցի գրիչ և նկարիչ Գրիգոր Արևելցի, Դրազարկի դպրոցի ամենաականավոր նկարիչ, ծաղկող Սարգիս Պիծակն ու իր հայրը՝ Գրիգոր Պիծակը: Ենթադրվում է, որ Սկևռայում է իր գործունեությունը սկսել Գլաձորի դպրոցի գրիչ, նկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկը¹¹ և ուրիշներ:

Սկևռայի վանքը համարվել է նաև կիլիկյան միջնադարյան բժշկական կենտրոններից: Դպրոցում բժշկության զարգացման համար կարևոր դեր է կատարել Ն. Լամբրոնացին, որի մատենագրության մեջ հիշվում է «Մարդակազմություն» աշխատությունը, որը, ցավոք, մեզ չի հասել: Այս հանգամանքը թելադրում է, որ դպրոցում դասավանդվել է նաև մարդակազմություն: Սկևռայի բժշկական ժառանգությունից քիչ բան է պահպանվել: Հայտնի է, որ վանքի մատենադարանում է պահվել Ամիի դպրոցի գլխագործոցի՝ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» կիլիկյան խմբագրությունը, որի առաջին խմբագրողն ու ստացողը հիշատակվում է Ն. Լամբրոնացու եղբայրը՝ Հեթում Սևաստուրը: Հավանաբար այս զբոսագրից ժամանակին կատարվել են շատ օրինակումներ¹²:

13-րդ դարավերջին Սկևռայի վանքում է ստեղծվել արծաթագործության լավագույն, գեղեցիկ մոտիվներից մեկը, որը կիրառական արվեստի պատմության մեջ հայտնի է «Սկևռայի մասնատուփը» անվանումով: Իր պատմական մշակակության, բարդ, խորիմաստ, արտահայտիչ մարմնավորմամբ և մարդկային պատկերներով, հարուստ մակագրություններով, մախշամտիվներով և կատարողական մեծ վարպետությամբ այս հուշարձանը բարձր է գնահատվել հայ արծաթագործության

⁹ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 98:

¹⁰ Լ. Ագաբյան, կիլիկյան հայկական մանրանկարչությունը 12-13-րդ դարերում, 1964 թ., Երևան, էջ 71:

¹¹ Ա. Ավետիսյան, Գլաձորի մանրանկարչական դպրոցը, 1971 թ., Երևան, էջ 50-55: Հմմտ. Կ. Մաթևոսյան, Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանը, «Գիտություն և տեխնիկա», 1991 թ., հ. 3, էջ 46-49:

¹² Ուսումնասիրություններից պարզվել է, որ Սկևռայի գրչատաճն է գրվել ՄՄ 416 ձեռագիրը: Ստ. Վարդանյան, Նոր տվյալներ միջնադարյան հայկական կենտրոնների մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1996 թ., էջ 33-37:

պատմության մեջ՝ համարվելով հայկական ոսկերչական արվեստի գլուխգործոցներից, դրվագարվեստում՝ եզակի մոտիվներից: Այս մասնատուսի գոյությունը թույլ է տալիս արվեստագետներին վաճառ համարել կիլիկյան Հայաստանի ոսկերչության և արծաթագործության կենտրոններից¹³:

Սկևռայի գրչատանը աշխատել են մեծ երաժշտության հմուտ մասնագետներ և ուսուցիչներ: Այս փաստի վկայությունն է Սկևռայում օրինակված երաժշտական տետրերը, որոնց գոյությունը թույլ է տալիս Սկևռան համարել մանրուսման կենտրոն¹⁴:

Սկևռայի դպրոցում է տեսականորեն ամբողջացվել գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը: Հայոց լեզվի գրադարձության, վանկատման, տողադարձի, կետադրության, առոգանության, ուղղագրության սկզբունքներն ու դրույթները մշակվել և կանոնավորվել են Գևորգ Սկևռացի ռաբունապետի գրչության արվեստի տեսությամբ մկրված երեք աշխատություններում¹⁵:

Պատմությունը փաստում է, որ լամբրոնյան Սկևռան որպես հոգևոր-մշակութային կենտրոն դադարել է գոյություն ունենալուց 13-րդ դարի վերջերին: Սամվել Ամեցու շարունակողը գրում է, թե 1275-ին «Հոռոմոց թուրքն այրեցին զհոչակաւոր ուխտն մեմաստանի Սկևռան»¹⁶: Ղ. Ալիշանը այս դեպքը թվագրում է 1270-80-ական թվականներին¹⁷: Ըստ հայտնի գրչագիր Ստեփանոս Գույներիցանցի, վերոհիշյալ դեպքերը կատարվել են 1300-ին: 1310-ին օրինակած Շառլնտիիրի հիշատակարանում գրիչը գրում է. «Աստ գրեցաւ ի թուականիս Չիսթ ի դառն ժամանակիս, քանզի զԼամբրոնին քաղաքն եւ շրջաքանկսն այրեցին մահմեդականքն, եւ մեք մազապործ հազիւ հազ կարեցաք զերծանել»¹⁸: Սկևռայում գրված և մեզ հասած վերջին ձեռագիրը թվագրված է 1349-ին: Ինչպես երևում է ձեռագրի հիշա-

¹³ Ա. Միրզոյան, Սկևռայի մասնատուսի, Նյու Յորք, 1993 թ.: Ա. Կակովկին, Հայ արվեստի մշակավոր հուշարձանը, Բ.Ե.Հ., 1979 թ., հ.3:

¹⁴ Կոմիտաս, Հոգևածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941 թ., էջ 105: Խազագրության ուսմունքին և տաղաչափության արվեստին գիտակ է եղել Գևորգ Սկևռացին. «Խլկու օրինակն է ի Ծարականացն, զոր մեծ վարդապետն Գեորգ ուղղեաց, այժ՝ որ զԵսայի Մարգարեն մեկնեաց ի խնդրոյ Հեթում թագաւորին ի Սիս... զի արհեստն առողանութեան խառնեալ լիցի ի յերզան, որպէս նոյն խլոյն օրինակն է, զոր սահմանեաց վարդապետն Գեորգ», Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 105-6:

¹⁵ Գ. Զառուկյան, Բերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, 1954 թ., Երևան, էջ 239-43: Լ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, 1962 թ., Երևան, էջ 99-171:

¹⁶ Գ. Հովսեփյան, Հիշատակարաններ, 1951 թ., Ամթիլիս, էջ 527:

¹⁷ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 107:

¹⁸ Ն. Պողարյան, Ցուցակ, Բ, էջ 276-77:

տակարանից, «յամբարի ժամանակները» շարունակվել են մինչև 14-րդ դարի 40-ական թվականները¹⁹:

Սկևռա վանքից մեզ հասած գրչագրական ժառանգությունը մոտ 75 գրչագիր է, որոնք պահվում են տարբեր մատենադարաններում: Մաշտոցյան Մատենադարանում դրանց քանակը 27 է: Ձեռագրական քննությունից պարզվեց սկևռացի գրիչների 47, մանրանկարիչների 10, երաժիշտների 5 անուն: Ձեռագրերն ունեն տարբեր բովանդակություն՝ Աստվածաշունչ, Ավետարան, Ծաշոց, Մանրումունք, բժշկական, մեկնողական գործեր, Սաղմոսարան, Մաշտոց, Վարք սրբոց, Ծարական:

Սկևռայի գրչատան մատենագրությունը կազմված է հետևյալ սկզբունքներով. ժամանակագրական կարգով ներկայացնում ենք սկևռացի գրիչներին և հեղինակներին²⁰: Գրչի անվան կողքին բերվում են գրչության վայրը, թվականը, բովանդակությունը, այն վայրը, որտեղ պահվում է ձեռագիրը, կամ այն աղբյուրը, որտեղից վերցրել ենք տվյալները: Եթե գրչության վայրը հիշատակված չէ, սակայն ենթադրվում է, ուստի այն բերվում է հարցականով: Նույն սկզբունքով ներկայացվում է սկևռացի մանրանկարիչների անվանացանկը:

Սկևռացի մանրանկարիչներ, մատենագրություն

Գրիգոր Մլիճեցի²¹

¹⁹ ՄՄ 7157 ձեռ.:

²⁰ Սկևռացի հեղինակներից Գրիգոր Սկևռացու, Մխիթար Սկևռացու, Գեորգ Լամբրոնացու գրչությանը մեզ ձեռագիր չի հասել, սակայն ենթադրվում է, որ նրանց գործերը գրվել են Սկևռայի վանքում: Այս պատճառով բերվում են միայն հետագա օրինակումներից մեզ ավանդված գործերի անվանումները:

Գրիգոր Սկևռացի, «Նիկիայի արքեպիսկոպոս Յովհաննէսի թուղթը», «Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծնողեան, սննդեան, քաղաքավարութեան և վերափոխման ամենասուրբ կուսին», «Ներքողեան ի սուրբ Լամբրոնացին», «Պատմութիւն վարուց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի», «Տէր ո՞ յաւատաց», «Վարք Գրիգորի Նարեկացւոյն», Եւագրի «Լուսաւոր պատերազմ» երկի մեկնությունը (վերագրվում է): «Արեգակն արդարութեան»:

Մխիթար Սկևռացի, «Պատասխանիք յաղագս հոմապատուութեան երկոտասան առաքելոցն», «Մխիթարայ վարդապետի, թէ զինչ է պատճառ մարդեղութեան բանին Աստուծոյ», «Մխիթար Սկևռացւոյ վասն Կոստանդնուպոլսոյ առանձինն որ է յատուկ յունաց»:

Գեորգ Լամբրոնացի, «Մեկնութիւն գործք առաքելոց», «Մեկնութիւն մարգարէութեան Եսայեայ», «Աւետարան», «Աստուածաշունչ», «Տօմացոյց», «Արուեստ գրչութեան: Վերագրվում են գանձեր, տաղեր, քարոզներ:

²¹ Տե՛ս մատենագրության մեջ: Գր. Մլիճեցուն է վերագրվում ՄՄ 311 ձեռագրում պահպանված Մարկոս ավետարանի նկարը և Մարկոսի ու Դուկասի ավետարանառաջները, Լ. Խաչիկյան, Ե-ԺԲ դդ. հիշ., 1988 թ., Երևան, էջ 208:

Կոստանդին	Սկևռայի վանք, 1190 թ., «Սաղմոսաց մեկնությունը» Ն. Լամբրոնացու, Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 98-99 Սկևռայի վանք, 1193 թ., Ավետարան, Սարգիսյան, Ցուցակ, էջ 557-559
Վարդան	Ձեռագիր չի հասել, մասնակցել է Գր. Մլինեցու 1173 և 1174 թթ. Սկևռայում և Հոռմկլայում օրինակած Ավետարանների նկարազարդմանը
Գրիգոր սարկավազ	Սկևռայի վանք, 1218 թ., Ավետարան, Նոր Զուղա 25, Ավետիսյան, Ցուցակ, էջ 38-41
Օգսենդ ²²	Սկևռայի վանք, 1263 թ., Ավետարան, ՄՄ 8590
Հովասաթի Ծաղկող	Սկևռայի վանք, 1273 թ., Ավետարան, «Բազմավեպ», 1968 թ., էջ 116-118
Հովհաննես Լամբրոնացի	Սիոն Սկևռայի վանք, 1293 թ., Ավետարան, ՄՄ 5784
Ծաղկող	Սկևռայի վանք, 1296 թ., Ավետարան, Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, 1957 թ., Վիեննա, էջ 83
Սահա՞կ	1349 թ., Մանրուսում, ՄՄ 7157
Գեորգ Լամբրոնացի ²³	

Մատենագրություն

1. Ներսես Լամբրոնացի

Սկևռա՞յի վանք, 1173 թ., Ավետարան, վարք սրբոց առնմ Աստուծոյ Գրիգորի Նա-
րեկացոյ, ՄՄ 1568:

Սկևռա՞յի վանք, 1173 թ., Գիրք պարապմանց Կիրողի Աղեքսանդրացոյ, ՄՄ 3276:

2. Բասիլ

Սկևռայի վանք, 1175 թ., հիշատակվում է, Ե-ԺԲ դդ. հիշ., էջ 218: Ալիշան, Սիսուան,
էջ 87:

3. Գրիգոր Մլինեցի

²² Այս նկարիչը մույնացվում է 1434-56 թթ. Կաֆայում աշխատած Օգսենդ գրչի և ծաղկողի հետ. Ա. Գեորգյան, Հայ մանրանկարիչներ, Մատենագրություն 9-14-րդ դդ., 1998 թ., Կահիրե, էջ 746:

²³ Մովսես Երզնկացու վկայությամբ Գ. Սկևռացին «Գեղազարդ շքով նկարել է Աստուածաշունչ, զոր տեսողաց եւ վայելողացն յայտնի է», Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 504:

Սկևռայի վանք, 1173 թ., Ավետարան, Գ. Սրվանձտյան, Թորոս Աղբար Բ, էջ 442-444:

Սկևռայի վանք, 1173 թ., Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության», ՄՄ 1568:
Սկևռայի վանք, 1198 թ., Սկևռայի Ավետարանը, Ակիմյան, «Սկևռայի Ավետարանը», «Հանդես ամսօրյա», 1930 թ., էջ 6-8:

Սկևռայի վանք, 1215 թ., Ավետարան, Նոր Զուղա, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 37 (սկզբնագրել է):

Սկևռայի վանք, 1218 թ., Ավետարան, Ն. Զուղա, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 39 (սկզբնագրել է)²⁴:

4. Կոստանդին (մականունը Կոշիկ)

Սկևռայի վանք, 1193 թ., Վեմետիկ 125, Սարգիսյան, Ցուցակ, էջ 557-559:

5. Սամվել (Ներսես Լամբրոնացու աշակերտ)

Սկևռայի վանք, 1190 թ., Ներսես Լամբրոնացու «Սաղմոսի մեկնություն», և «Պատմություն վարուց Ներսիսի եպիսկոպոսի՝ Երզնցս սաղմոսիս քննողի», ՄՄ 1526:

6. Գեորգ Սկևռացի

Սկևռայի վանք, 1154 թ., Ծաշոց, ՄՄ 832:

Սկևռայի վանք, 1192 թ., Վարք հարանց, Ե-ԺԲ դդ. հիշ., էջ 267-268:

7. Գրիչ աճանուն

Սկևռայի վանք, 1197 թ., Մեկնություն առակաց Լամբրոնացու, Ե-ԺԲ դդ. հիշ., էջ 292: Էջմիածնի թ. 4211:

8. Հովհաննես (Ներսես Լամբրոնացու աշակերտ)

Սկևռայի վանք, 1198 թ., Վեշտասան ասացուածք Եփրեմի Ասորու, Երուսաղեմ, Պողարյան 326, Ցուցակ Բ, էջ 199:

9. Վահրամ

Սկևռայի վանք, 1198 թ., Վեշտասան ասացուածք Եփրեմի Ասորու, Պողարյան, Ցուցակ, էջ 199 (350ա-385բ էջերի գրիչը):

10. Խաչատուր (Ն. Լամբրոնացու աշակերտ)

Սկևռայի վանք, 1198 թ., Ողբն յարքեպիսկոպոսն Տարսնի ի Մեծն Ներսես ասացեալ Խաչատուր պաշտօնէի, մորիմ աշակերտի, «Բազմավեպ» 1844 թ., էջ 242-243:

11. Ներսես (Ն. Լամբրոնացու և Գրիգոր Սկևռացու աշակերտ)

Սկևռայի վանք, 1205 թ., Ն. Լամբրոնացու մատենագրությունը, ՄՄ 10509:

12. Պետրոս քահանա

²⁴ Սկզբնագրված երկու Ավետարանները ավարտել է գրիչ և մկարիչ Գրիգոր սարկավագը 1216 և 1218 թվականներին:

Սկևռայի վանք, 1206 թ., Մեկնութիւն Կաթողիկէայ թղթոց, Վիեննա, 1470 թ., «Հանդես ամսօրյա», 1978 թ., էջ 432-434:

13. Գրիգոր սարկավագ

Սկևռայի վանք, Տարսոն, 1216 թ., Ավետարան, Ն. Զուղա, Տեր-Ավետիսյան. Ցուցակ, էջ 37:

Սկևռայի վանք, 1218 թ., Ավետարան, Ն. Զուղա, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 39:

14. Բարսեղ (Վասլուկ)

Սկևռայի վանք, 1216 թ., Յաճախապատում ճառք Գրիգոր Լուսատրչի, ՄՄ 5528

15. Թորոս²⁵

Սկևռայի վանք, 1220-82 թթ., Աստվածաշունչ, Բ. Սարգիսյան, Ցուցակ Մխիթարյանց Բ, Վեմետիկ, էջ 49-59 (Հիշվում է 93ր էջի հիշատակարանում Բարսեղ գրչի անունը)

16. Կոստանդ

Սկևռայի վանք, 1228 թ., Ժողովածու, Երուսաղեմ, 1295, Ն. Պողարյան, Ցուցակ Դ, էջ 515-51:

17. Պողոս

Սկևռայի վանք, 1228 թ., վերոհիշյալ ձեռագրում իր գրչությանը կա հիշատակարան:

18. Հովսեփ²⁶

Սկևռայի վանք, 1229 թ., Ավետարան, Պողարյան, Ցուցակ ԺԱ, էջ 1:

19. Հուսկան

Սկևռայի վանք, 1237 թ., Ավետարան, «Հանդես ամսօրյա», 1951 թ., էջ 69-71:

20. Առաքել երեց

Սկևռայի վանք, 1243 թ., Ավետարան, Բիւզանդիոն, 1902 թ., թ.1725:

21. Հովսեփ

Սկևռայի վանք, 1250 թ., Գրիգոր Սկևռացու ճառերը, Վիեննա, Տաշյան, Ցուցակ, էջ 557:

22. Կոստանդին²⁷

Սկևռայի վանք, 1255 թ., Նոր Կտակարան, ՄՄ թ. 6661:

Սկևռայի վանք, 1268 թ., Աստվածաշունչ, ՄՄ թ. 287:

Սկևռայի վանք, 1297 թ., Ջերմանց մխիթարութիւն, ՄՄ 416:

²⁵ Ձեռագրի գրչության թվականը համարվում է 1220-82 թթ., իսկ գրչության վայրը՝ Սկևռան: Հմմտ. Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց, Բ, էջ 49-59: Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 545:

²⁶ Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 255:

²⁷ Ստ. Վարդանյան, Ոջվ. աշխ., էջ 33-41:

23. Ստեփանոս քահանա²⁸

Սկևռայի վանք, 1263 թ., Ավետարան, ՄՄ 8590:

Սկևռայի վանք, 1272 թ., Խազգիրք, Պողարյան Ցուցակ, հ. Ե, էջ 485:

Սկևռայի վանք, 1273 թ., Ավետարան, Շողակաթ, 1966 թ., էջ 94-98:

Սկևռայի վանք, 1275 թ., Խազգիրք, Սիրմեյեան Ցուցակ ձեռագրաց Հալեպի, էջ 243:

Սկևռայի վանք, 1278 թ., Մանրումունք-խազգիրք, ՄՄ 759:

Սկևռայի վանք, 1283 թ., Ավետարան, ՄՄ 6764:

Սկևռայի վանք, 1285 թ., Նոր Կտակարան, Ալիշան, Հայապատում Բ, էջ 496:

Սկևռայի վանք, 1290 թ., Ավետարան, ՄՄ 2630:

Սկևռայի վանք, 1290 թ., Ավետարան, Կիլիկիայից ցուցակ ձեռագրաց Ամկիրիոյ, էջ 1338-39:

Սկևռայի վանք, 1293 թ., Ավետարան, ՄՄ 5784:

Սկևռայի վանք, 1295 թ., Ավետարան, Սրվանձտյան Գ., Թորոս Աղբար Բ, Կ. Պոլիս 1884, էջ 343-344:

Սկևռայի վանք, ԺԳ դար, Մեկնութիւն Յովհաննու Ավետարանին Յովհաննիսի Ոսկեբերանի, ՄՄ 3816:

Սկևռայի վանք, 1286 թ., Հեթում Բ թագավորի Ծաշոցը, ՄՄ 979:

24. Ստեփանոս Գույմերիցանց (Գեորգ Սկևռացու աշակերտ)

Սկևռայի վանք, 1288 թ., Աստվածաշունչ, Ալիշան, Հայապատում Բ, էջ 496-497:

Սկևռայի վանք, 1292 թ., Աստվածաշունչ, ՄՄ 179:

25. Սարգիս

Սկևռայի վանք, 1292 թ., Ժողովածու, Նոր Զուղայի Ամենափրկիչ վանք, հ. Ա, էջ 636-39:

26. Գրիչ անանուն

Սկևռայի անապատ, 1295 թ., Ավետարան, Քիրտեան հաւաքածոյ:

27. Լեոն

Սկևռայի վանք, 1295 թ., Գեորգ Սկևռացու Մեկնութիւն Եսայեա, ՄՄ 482:

28. Ստեփանոս²⁹

Սկևռայի վանք, 1295 թ., Աստվածաշունչ Հեթում Բ թագավորի, ՄՄ 180:

²⁸ Ստեփանոս քահանա սխալմամբ նույնացվել է Ստեփանոս վահկացի գրչի հետ. Ա. Գեորգյան, Ձվ. աշխ., էջ 698: Հմմտ Հ. Բադալյան, Ստեփանոս քահանա և Ստեփանոս իրիցորդի գրիչների գործունեությունը 13-րդ դարի 60-90-ական թվականներին, 1997 թ., էջմիածին, էջ 96-102:

²⁹ Հիշատակարանների բովանդակության մասնությունը թույլ է տալիս ենթադրել, որ ձեռագրերի գրիչը նույնն է, հավանաբար Ստեփանոս քահանայի եղբոր՝ Կոստանդին քահանայի որդին է, Լեոն գրչի եղբայրը, որոնք Սկևռայում օրինակել են քազմաթիվ ձեռագրեր:

30. Պետրոս

Սկևռայի վանք, 1296 թ., Եսայի մարգարեի և Թուրթ Պողոսի գրքերը, Ղ. Ալիշան, Սիսում, էջ 106-7: Ծովական, Սիոն, էջ 186:

31. Ստեփանոս իրիցորդի

Սկևռայի վանք, թվ. անհայտ, Կոչումն ընծայութեան Կիրդի Երուսաղեմացոյ, ՄՄ 780:

Սկևռայի վանք, 1297 թ., Ավետարան, մանրածապավեն թ. 488, Երևան:

Սկևռայի վանք, 1274 թ., Լուծմունք ի Սուրբ Գրոց Ժղլանք կոչեցեալ, Պողարյան, Յուցակ, Բ. Գ., էջ 414:

32. Գրիգոր

Սկևռայի վանք, 1298 թ., Եսայի մարգարեի մեկնութիւնը, ՄՄ 4214:

33. Հովհաննէս³⁰

Սկևռայի վանք, 1298 թ., Ավետարան, Ամթիլիս 156, Դանիելյան Յուցակ, էջ 452:

Սկևռայի վանք, 1298 թ., Ավետարան, Սյուրմեյան, Յուցակ, հայ. ձեռ. Հալեպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցոյ եւ մասնատրաց, Երուսաղեմ, 1935, էջ 394-95:

34. Գրիգոր Չորունկ³¹

Սկևռայի վանք, 1299 թ., Ծաշոց, Պողարյան ցուցակ Բ, Երուսաղեմ 454, էջ 429-91:

35. Սիմեոն³²

Սկևռայի վանք, 1301 թ., Գանձարան, Յուցակ Նիկոսիայի ի Կիպրոս, Ն. Ակիմյան, Վիեննա 1961 թ., էջ 106-8:

36. Հովհաննէս (որդի Մինայի)

Սկևռայի վանք, 1310 թ., Նոր Կտակարան, Պողարյան, Բ. Զ, էջ 496-502:

Սկևռայի վանք, 1328 թ., Վարք սրբոց, Պողարյան, Բ. Ա, էջ 302-307:

37. Հովհաննէս

Սկևռայի վանք, 1314 թ., Հատուածք Հիմ Կտակարանի, Վասպուրական 33, Հալա-յան ցուցակ, պոմ. 59-62:

Սկևռայի վանք, 1305 թ., Ավետարան, Ծովական, Սիոն, էջ 186:

Սկևռայի վանք, 1305 թ., Աստվածաշունչ, Տաշյան ցուցակ, էջ 632:

Սկևռայի վանք, 1319 թ., Աստվածաշունչ, Վենետիկ, թ. 17, Բ. Ա, էջ 19-20:

³⁰ Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի ձեռ. թիշ., էջ 803:

³¹ 1325 թ. Սիմեոն գրչի օրինակած ՄՄ 2388 մանրուսմունք խազգորքի ճիշատակարանը վկայում է, որ ձեռագիրը գրվել է «ի լաւ եւ ի ստոյգ արիմակաց... գոր էր գրեալ Գրիգոր Չորունկ»: Լ. Խաչիկյան, ԺԴ դարի ձեռ. թիշ., էջ 198:

³² Ն. Ակիմյանը գրչին նույնացնում է Սկևռայի առաջնորդ Սիմեոն եպիսկոպոսի հետ: Ն. Ակիմյան, Յուցակ Նիկոսիայի ի Կիպրոս, 1961 թ., Վիեննա, էջ 106-108:

38. Ներսես

Սկևռայի վանք, 1314 թ., Մաշտոց, ՄՄ 2787:

39. Ստեփանոս դպիր

Սկևռայի վանք, 1324 թ., Ժողովածու, Օքսֆորդ ms. Avrm E2, Տիրայր վարդ. 17, թղթ. 119, էջ 314:

Սկևռայի վանք, 1324 թ., Վարք սրբոց, Սիսուան, էջ 107:

Սկևռայի վանք, 1341 թ., Ծարական, Ծովական, Սիոն, էջ 186:

40. Հովհաննես

Սկևռայի վանք, 1325 թ., Ավետարան, ՄՄ 5708:

41. Հովհաննես կրոնավոր

Սկևռայի վանք, 1328 թ., Վարք սրբոց, Սյուրմեյան, Ցուցակ Ա, էջ 236

42. Գրիգոր քահանա

Սկևռայի վանք, 1349 թ., Մանրումունք, ՄՄ 7157

43. Անանուն գրիչ

Սկևռայի վանք, ԺԳ-ԺԴ դդ., Սաղմոսարան, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 207:

